



| Հիմանառու Տայրերը :

Ի բանանու մայրերը՝ աշխարհքիս
բնական յիշատակներուն մէջ ամէնէն
երևելիներն են, ու խիստ անուանի
եղած են թէ կրօնի՝ թէ բանաստեղ-
ծութեան և թէ պատմութեանց
մէջ։ Յայտնի է որ սուրբ գրոց մէջ
շատ անգամ ասոնք կըսիշուին։ մար-
գարէները ասոնք օրինակ կըթերեն
շատ անգամ մեծութե, փառաւորու-
թեան և ամէն տեսակ վսեմու զուար-
ձալի տեսարաններու։ Այդումն ալ
Կատուծոյ տաճարը շինելու ատեն ա-
սոնք առաւ գործածեց։ Այս բանե-
րուս համար | իբանանու մայրերը ոչ

1 Տէ՛ Եկրվ առաք : Լտ. Cedrus, որ հայերէն
եղեին կամ Եղեսակար ալ կըսուի : Պէտք չէ շփո-
թել հասարակ և, բայտին հետ, որ աճ. չամ,
և լատ. pinus կամ abies կըսուի, ու հայերէն ալ
բեզզ:

միայն հին ատենը սրբազան ծառե-
րու պէս յարգի էին, հապա նաև ին-
չուան հիմա ասորուոց երկրին բնակիւ-
ները ինչ ազգէ և ինչ ազանդէ ալ
ըլլան՝ աւանդութեամբ կըպատուեն
աս ծառերը, և մտքերնին զրած են
որ ասոնք թէպէտ և բոյս են, բայց
կենդանեաց ու մարդկանց պէս խելք
ու նախագիտութիւն ունին, և առա-
ջուցկըսակեն եղանակները. իրենց
ձիւղերը ուղածնուն պէս ասդիս ան-
դին կըդարձնեն. երբեմն դէպ 'ի
երկինք կըթարձրացընեն, երբեմն ալ
դէպ 'ի գետին կըծռեն, և այն :

Օ արմանալի բաներուն մէկն ալ
աս է՝ որ բոլոր | իբանանու երկիրը
միայն մէկ տեղ մը կըթուսնին աս ծա-
ռերը, և հոն ասոնցմէ զատ ուրիշ
մէկ բոյս մըն ալ չկայ : | Եղք որ ա-

սանք ալ տարուէ տարի քիչնալու վը-
րայ են . առաջ Ճամբորդները 30,40ի
չափ կըհամրեն եղեր . քիչ մը ա-
տենէն ետքը տասնըեօթը հատ
գտեր են , վերջը տասւերկու հատ .
իսկ հիմա եօթը հատը միայն մնացած
է խիստ խոշորներէն : Այսոնց քովը
կայ նաև ուրիշ չորս կամ հինգ հա-
րիւր մայրի ծառերով մէկ անտառ
մըն ալ : Իսկ ան կարծիքը թէ Եթա-
նանի մայրը աշխարհիս ուրիշ մէկ
կողմն ալ չգտնուիր՝ անհիմն է . վասն
զի Պալլաս անունով երեւելի բնախօ-
սը նոյն ծառերէն գտաւ նաև Աւրալ
լեռներուն վրայ , և Պելոն Ճանապար-
հորդը փոքր Այսիայի մէջ . ուրիշներն
ալ փորձեցին օտար երկիրներ մեծցը-
նելու աս տունկը : 1683ին տնկեցին
Ենտրայի մօտ Չելսի ըսուած պար-
տէզին մէջ , և ան եղաւ առաջին մայ-
րը որ Եւրոպայի մէջ տեսնուեցաւ .
աս փորձը յաջողելով՝ շատ մարդիկ
ալ յորդորուեցան նմանն ընելու .
1745ին Եփւսիէօ գաղղիացին մատ-
ղաշ մայրի մը բերաւ Եթանանէն որ
հիմա Փարիզի տնկաթանական պար-
տէզին գեղեցիկ զարդերէն մէկն է :
Եթանանու մայրը միակերպ չենար,
ու շուտով չհասնիր իրեն զարմա-
նալի բարձրութեանը . առջի տարի-
ները քիչ կըթարձրանայ , եօթը կամ
ութը տարուան մէջ հազիւ եօթը ու-
թը ոտնաչափ կըլլայ . բայց անկէ վեր-
ջը շուտ շուտ կաձի , ու տարին գրե-
թէ կանգուն մը կըթարձրանայ՝ ին-
չուան 100 ոտք , անկէ վեր չելլեր :
Դէպ 'ի լայնքը աճիլը աւելի կարգա-
ւորեալ կերպով կըլլայ . դրա ամէն տարի
եօթը գծաշափ կըմեծնայ . անանկ
որ քանի տարուան ըլլալը իրեն տը-
րամագծէն դիւրաւ կըճանցուի : Եթ-
անանու էն հաստ մայրը , որ Պո-
քոք Ճանապարհորդին ըսածին նայե-
լով՝ 36 ոտք շրջապատ ունի , 3000
տարեկան կըլլայ : Այսին հունտէն
ելած ձէթովը որ և իցէ բան կօծեն
ու չփրտտիր կըսեն . և անշուշտ ասոր
համար է որ հին ատենը ըմբշամար-

տիկները ¹ ասով կօծուին եղեր : Հին
ատենը կուռքերու արձաններն ալ
մայր փայտէ կըշինէին , որ ժամանակ
անցնելով չփրտտին . հրեայք աս փայ-
տը շինուածքի կըթանեցընէին , իսկ
Երգիպտոսի ու Ասորւոց թագաւոր-
ները նաւ շինելու : Հիմա Եթանա-
նու մայրը և իրեն խէժը շատ սուղ
է , վասն զի շատ կըգտնուի . և աւե-
լի զարդի համար կըտնկեն քան թէ
օգտակարութեանը համար : Դար-
նան կըցանեն աղէկ հասած հունտե-
րը (վասն զի երկու տարի պէտք է
ինչուան որ հասուննան) կակուղ ու
աւազոտ երկիրներու մէջ . աս հուն-
տերը որովհետեւ հաստ կեղեւ ունին
ու գժուարաւ կըթացուին , անոր հա-
մար պզտի հերիւնով ² մը կըծակեն
կեղեւը : Եթանանու մայրին տերե-
ներկարձ ու խիտ են , և գլխա-
ւոր Ճիւղերն ալ ուրիշ շատ Ճիւղեր
կըթաժնուին . մէջտեղինները ուղ-
ղահայեաց կըմեծնան , իսկ քովին-
ները պառկած կամ հորիզոնական
գրքով կըտարածուին : Եարծիք մը
կար երկար ատեն թէ աս Ճիւղերուն
վերի ծայրերը միշտ դէպ 'ի արևմուտք
կըդաւնան . բայց ետքը փորձով ու
դիտողութեն իմացուեցաւ աս կարծի-
քին ծռութիւնը :

Ան Ճամբորդներն որ արևելք կը-
պտըտին և սուրբ երկիրները տեսնե-
լու կերթան , աս Եթանանու մայ-
րերը տեսնելու արժանի բաներէն մէ-
կը կըսեպէն : Եւրոպացի նոր Ճամ-
բորդներէն աս մայրերը տեսնողնե-
րուն մէջ երեւելի է Եամարթին բա-
նաստեղծը , որ 1833ին , ապրիլի մէջ
տեսած է աս անուանի ծառերը :

1 Փէհլէւն:

2 Մոմուկու , պէւ: